<<Զբոսաշրջության աշխարհագրություն>> խմբակի ծրագիր

(աշխարհագրություն)

Դասարան՝ 10-12րդ

Ժամաքանակ՝ շաբաթական 2 ժամ, ընդհանուր՝ 68 ժամ

Արմավիրի մարզի <<Գետաշենի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

Խմբակավար՝ աշխարհագրության ուսուցչուհի Ն. Ջանիբեկյան

2023-2024 ուստարի

Բացատրագիր

<<Զբոսաշրջությունը քիմիական գործարան է առանց ծխնելույզների>> . իզուր չէ ասված: Այսօր զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության զարգացման առաջնահերթ ուղղություններից մեկն է համարվում աշխարհում և շատ երկրների եկամտի կարևոր աղբյուրն է դարձել: Մերօրյա հրամայականն է սովորողներին զինել այս ոլորտին վերաբերող գիտելիքներով ու հմտություններով:

Խմբակի գործունեության արդյունքում սովորողները գաղափար կկազմեն զբոսաշրջության զարգացման նախադրյալների, արդի հիմնախնդիրների մասին, կարժևորեն ու կգնահատեն նրա դերը իրենց երկրի տնտեսության զարգացման գործում: Ուսումնասիրելով աշխարհի տարբեր տարածաշրջանների զբոսաշրջության աշխարհագրությունը՝ կվերլուծեն սեփական երկրի ու համայնքի ռեկրեացիոն ռեսուրսները՝ որպես տուրիզմի զարգացման նախադրյալներ, կմշակեն ու կստեղծեն իրենց երկիրն ու համայնքը ճանաչելի դարձնելու հայրենաճանաչողական երթուղիներ: Խորապես ճանաչելով իրենց երկրի ու համայնքի աշխարհագրությունը, գնահատելով նրա ռեկրեացիոն ներուժը՝ սովորողների մոտ կձևավորվի հոգատար վերաբերմունք նրա բնության ու պատմաճարտարապետական կոթողների պահպանության նկատմամբ: Խմբակի աշխատանքների շրջանակներում սովորողների մոտ կձևավորվի մայրենի լեզվով իրենց երկրի աշխարհագրությունը գրագետ ներկայացնելու լեզվական կարողունակություն, կտիրապետեն տուրիզմի տերմինալոգիային, կձևավորվի խնայողական վերաբերմունք զբոսաշրջային արժեք ներկայացնող ռեսուրսների նկատմամբ, կիրականացնեն նախագծեր , որոնք ուղղված կլինեն իրենց երկրում և համայնքում զբոսաշրջության զարգացմանը:

Նպատակները

1.Գաղափար տալ զբոսաշրջության պատմական ու աշխարհագրական զարգացման մասին:

2. Ձևավորել ու զարգացնել պրակտիկ գիտելիքներ զբոսաշրջության տեսակների , կազմակերպման ձևերի , դրանց վրա ազդող գործոնների մասին:

3. Նպաստել սովորողների՝ դատողություններ անելու հմտությունների ձևավորմանը, օրինակ՝ մտածել զբոսաշրջություն-տնտեսություն-էկոլոգիա փոխադարձ ազդեցության մասին:

4.Նպաստել թվային և մեդիա գիտելիքների զարգացմանը՝ օնլայն խաղերի պատրաստում նշված հարթակներով՝ https://kahoot.com/ , https://wordwall.net , սահիկների պատրաստում Canva, Google slides, Power Point ծրագրերով:

5. Գնահատել սեփական երկրում ու համայնքում զբոսաշրջության զարգացման հեռանկարները և առկա հիմնախնդիրները:

Վերջնարդյունքները

Ուստարվա ավարտին խմբակում ընդգրկված սովորողները կկարողանան՝

1. Ներկայացնել զբոսաշրջության բնագավառը գրական հայերենով և զբոսաշրջային եզրույթների կիրառմամբ:
2. Դասակարգել զբոսաշրջության տեսակները, կազմակերպման ձևերը, զբոսաշրջիկների խմբերն ըստ նախասիրությունների:
3. Թվարկել և վերլուծել Հայաստանի Հանրապետությունում տուրիզմի զարգացմանը նպաստող բնական և հասարակական գործոնները:
4. Վերլուծել ու դատողություններ անել Հայաստանի Հանրապետությունում տուրիզմի զարգացման հեռանկարների և առկա հիմնախնդիրների մասին:
5. Ստեղծել թվային և մեդիա արտադրանք զբոսաշրջության մասին:
6. Նախագծել և իրականացնել հայրենաճանաչողական էքսկուրսիաներ:

Խմբակի ծրագրի տարեկան թեմատիկ պլանավորում				
Ժամաքանակ		**Շաբաթական 2 ժամ, ընդհանուր՝ 68 ժամ**		
Հ/հ	**Բովանդակություն**	**Նպատակ**	**Ժամաքանակ**	**Նշումներ (մեթոդներ և առաջադրանքներ ի օրինակներ)**
1.	Ներածություն	Սովորողների հետ քննարկել խմբակի ծրագիրը, համաստեղծել դրական թիմային մշակույթի նորմեր :	1	Բանավոր զրույց, Հարց ու պատասխան
2.	Հայտորոշիչ թեստի անցկացում	Պարզել սովորողների նախնական գիտելիքներն ու պատկերացումները դասընթացի վերաբերյալ:	1	Օնլայն թեստի անցկացում Google form հարթակով:
Թեմա 1. Զբոսաշրջությունը՝ որպես աշխարհագրության ուսումնասիրման համակարգ - 8 ժամ				
3.	Զբոսաշրջությունը՝ որպես աշխարհագրական և տնտեսագիտական ուսումնասիրման բնագավառ	Զարգացնել գիտելիքներ զբոսաշրջության բնագավառի մասին	1	Դասախոսություն սահիկի ցուցադրությամբ
4.	Զբոսաշրջության ձևավորման պատմատնտեսական նախադրյալները	Ընդհանուր պատկերացում տալ զբոսաշրջության զարգացման շարժընթացի մասին:	1	Բանավոր զրույց, պատառի ցուցադրություն
5.	Զբոսաշրջություն հասկացության բովանդակությունն ու բնորոշումը: Զբոսաշրջիկների խմբերն ըստ նախասիրությունների	Ընդհանուր պատկերացում տալ <<զբոսաշրջություն>> եզրույթի և զբոսաշրջիկների խմբերի մասին:	1	Դասախոսություն սահիկի ցուցադրությամբ, Ծավալել զրույց սովորողների նախընտրած զբոսաշրջության տեսակի վերաբերյալ

6.	Զբոսաշրջության տեսակներն ու ձևերը	Ձևավորել պատկերացում զբոսաշրջության տեսակների ու ձևերի մասին:	1	Դասախոսություն սահիկի ցուցադրությամբ
7.	Զբոսաշրջության պահանջարկը և առաջարկը	Գաղափար տալ զբոսաշրջության պահանջարկի և առաջարկի ու դրանց փոխադարձ կապի մասին	1	Բանավոր զրույց, <<Մտքի քարտեզագրում >> մեթոդի կիրառում
8.	Զբոսաշրջային տարածաշրջաններ	Ձևավորել զբոսաշրջային տարածաշրջանները համեմատելու և ըստ այդմ դատողություններ անելու կարողություններ:	1	Վենի դիագրամ մեթոդի կիրառում
9-10	Գործնական աշխատանք	Զարգացնել ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառելու հմտություններ	2	Պաստառի պատրաստում, Kahoot հարթակով օնլայն խաղի անցկացում
Թեմա 2. Զբոսաշրջության զարգացման հիմնական փուլերն ու յուրահատկությունները- 13 ժամ				
11-12	Զբոսաշրջության կառավարման համակարգը և կառուցվածքը	Ընդհանուր պատկերացում տալ զբոսաշրջության կառավարման և դրա վրա ազդող գործոնների մասին:	2	Բանավոր զրույց
13.	Տնտեսության ազդեցությունը զբոսաշրջության վրա	Զարգացնել գիտելիքներ բնագավառի վերաբերյալ: Ձևավորել դատողություններ անելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու կարողություն:	1	<<Ապագայի անիվ>> մեթոդի կիրառում

14.	Զբոսաշրջության ազդեցությունը տնտեսության վրա	Զարգացնել գիտելիքներ բնագավառի վերաբերյալ: Ձևավորել դատողություններ անելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու կարողություն:	1	<<Ապագայի անիվ>> մեթոդի կիրառում
15.	Էկոլոգիան և զբոսաշրջությունը	Զարգացնել գիտելիքներ բնագավառի վերաբերյալ: Ձևավորել դատողություններ անելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու կարողություն:	1	Դասախոսություն սահիկի ցուցադրությամբ
16-17.	Զբոսաշրջության զարգացումն ապահովող տեխնիկական միջոցները	Ընդհանուր գաղափար տալ տուրիզմի ոլորտը սպասարկող բնագավառների մասին:	2	Դասախոսություն սահիկի ցուցադրությամբ
18-20	Գործնական աշխատանք	Զարգացնել ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառելու հմտություններ: Ձևավորել համագործակցելու հմտություններ	2	Խմբային աշխատանքների կազմակերպում՝ պատրաստել պաստառ, առաջադրել ոլորտի մեկ հիմնախնդիր և մշակել լուծումը առնվազն 3 գործողությունից բաղկացած:
21-22.	Հաշվետու բաց դասի նախապատրաստում	Կազմակերպել ամփոփիչ դաս՝ ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները ամրապնդելու	2	Բաց դասի սցենարի համաստեղծում խմբակի անդամների

		համար		կողմից
23.	Բաց դաս		1	
24.	Էքսկուրսիա դեպի Հայաստանի Հանրապետության հյուսիս:	Զնավորել հայրենաճանաչողական երթուղիներ նախագծելու և օրակարգը մշակելու հմտություններ	Մեկ ամբողջ օր	Բացահայտել Հայաստանի հյուսիսի գեղեցկությունը: Էքսկուրսիայից հետո գրել էսսե՝ <<Իմ տպավորությունները >> վերնագրով
Թեմա 3. Զբոսաշրջության աշխարհագրությունը՝ որպես զբոսաշրջության և հանգստի ուսումնասիրման , կազմակերպման բնագավառ- 17 ժամ				
25.	Զբոսաշրջության աշխարհագրության ընդհանուր առանձնահատկությունները	Ընդհանուր պատկերացում տալ աշխարհագրության այս ճյուղի դերի ու կառուցվածքի մասին:	1	Բանավոր զրույց
26-27.	Հանգստի ու զվարճությունների նպատակով իրականացվող զբոսաշրջությունը Եվրոպայում	Խորացնել աշխարհագրական գիտելիքները Եվրոպայի ռեկրեացիոն ռեսուրսների մասին: Զնավորել մշակութային կարողունակություն:	2	Դասախոսություն Տեսանյութի ցուցադրություն Խմբային աշխատանք SWOT գործիքի կիրառմամբ
28-29.	Հանգստի ու զվարճությունների նպատակով իրականացվող զբոսաշրջությունը Ամերիկա աշխարհամասում	Խորացնել աշխարհագրական գիտելիքները Ամերիկա աշխարհամասի ռեկրեացիոն ռեսուրսների մասին: Զնավորել մշակութային կարողունակություն:	2	Դասախոսություն Տեսանյութի ցուցադրություն Խմբային աշխատանք SWOT գործիքի կիրառմամբ
30-31	Զբոսաշրջությունը Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում	Ծանոթացնել Արևելքի մշակութային ժառանգության հետ	2	Դասախոսություն Տեսանյութի ցուցադրություն Խմբային աշխատանք՝

				Վենի դիագրամով համեմատական վերլուծություն անել Արևմուտքի և Արևելքի զբոսաշրջության զարգացման և հիմնախնդիրների մասին
32-33	Զբոսաշրջությունն Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում և Հարավային Ասիայում	Խորացնել աշխարհագրական գիտելիքները նշված տարածաշրջանների ռեկրեացիոն ռեսուրսների մասին: Զևավորել մշակութային կարողունակություն:	2	Սահիկի ցուցադրություն Խմբային աշխատանք
34.	Գործարար զբոսաշրջության աշխարհագրություն	Ծանոթացնել զբոսաշրջության տեսակների հետ: Գաղափար տալ գործարար զբոսաշրջության մասին, դրանց հիմնական ուղղությունների և տևողության մասին	1	Սահիկի ցուցադրություն Խմբային աշխատանք
35-36.	Համաժողովների , ցուցահանդեսների կազմակերպման նպատակով իրականացվող զբոսաշրջության աշխարհագրություն	Զարգացնել գիտելիքներ զբոսաշրջության նշված տեսակի մասին: Ընդհանուր պատկերացում տալ աշխարհի խոշորագույն ցուցահանդեսների մասին:	2	Տեսանյութերի ցուցադրություն Խմբային աշխատանք՝ պաստառի պատրաստում
37.	Ինտենսիվ զբոսաշրջության աշխարհագրություն	Բացահայտել զբոսաշրջության այս տեսակի էությունն ու	1	Բանավոր զրույց: Խմբային աշխատանք՝

		ուղղությունները: Զարգացնել ստեղծագործական հմտությունները:		մտածել աշխատանքի արդյունավետության բարձրացման առնվազն 3 այլ տարբերակներ
38.	Կրոնական զբոսաշրջության աշխարհագրություն	Գաղափար տալ կրոնական ուխտագնացության կազմակերպման, ուղղությունների , կրոնական տարածաշրջանների մասին:	1	Սահիկի ցուցադրություն Խմբային աշխատանք
39.	Բուժառողջարարական զբոսաշրջության աշխարհագրություն	Գաղափար տալ բուժառողջարարական զբոսաշրջության, աշխարհի կուրորտային վայրերի , դրանց զարգացմանը նպաստող ռեսուրսների մասին	1	Դասախոսություն, տեսանյութի ցուցադրություն
40-41.	Գործնական աշխատանք	Զարգացնել ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառելու հմտություններ: Ձևավորել համագործակցելու հմտություններ	2	Խմբային աշխատանքի կազմակերպում՝ պատրաստել սահիկ զբոսաշրջության որևէ տեսակի վերաբերյալ
Թեմա 4. Զբոսաշրջությունը՝ որպես ազգային տնտեսության արագ զարգացող բնագավառ-3 ժամ				
42.	Ժամանակակից զբոսաշրջության դերը տնտեսության զարգացման գործում	Զարգացնել հմտություններ ռեկրեացիոն ռեսուրսները ճանաչելու և գնահատելու վերաբերյալ:	1	Հարց ու պատասխան Խմբային աշխատանք՝ Ֆրայերի մոդելով պաստառի պատրաստում:
43.	Զբոսաշրջությունը՝ որպես տնտեսական համընդհանուր գործընթաց	Գաղափար տալ զբոսաշրջության ծախսերի և եկամուտների	2	Բանավոր զրույց, Խնդիրների լուծում

		հաշվեկշռի մասին: Խթանել մաթեմատիկական հաշվարկներ անելու հմտություններ:		
Թեմա 5. Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգային զբոսաշրջության հեռանկարային զարգացման տարածաշրջան-25 ժամ				
44-45.	Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի գնահատումը՝միջազգային զբոսաշրջության զարգացման առումով	Խորացնել սովորողների աշխարհագրական գիտելիքները , ձևավորել դատողություններ անելու հմտություններ	2	Դասախոսություն՝սահիկի ու Հայաստանի թեմատիկ քարտեզների ցուցադրությամբ
46.	Հայաստանի Հանրապետությունում միջազգային զբոսաշրջության զարգացման բնական նախադրյալները	Զարգացնել հմտություններ սեփական երկրի ռեկրեացիոն ռեսուրսները ճանաչելու և գնահատելու ուղղությամբ:	1	Հարց ու պատասխան : Տեսանյութի ցուցադրություն
47.	Հայաստանի Հանրապետության կլիմայական առանձնահատկությունները զբոսաշրջության զարգացման առումով	Զարգացնել պատճառահետևանքային դատողություններ անելու հմտություններ	1	Դասախոսություն սահիկի ցուցադրությամբ
48-49.	Հայաստանի Հանրապետության բուսական ու կենդանական ռեսուրսների նշանակությունը զբոսաշրջության զարգացման գործում	Զարգացնել գիտելիքներ ՀՀ ֆլորայի ու ֆաունայի և դրանց ռեկրեացիոն արժեքի մասին:	2	Դասախոսություն՝սահիկի ու Հայաստանի թեմատիկ քարտեզների ցուցադրությամբ
50-51.	Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների գնահատումը զբոսաշրջության և հանգստի կազմակերպման	Զարգացնել գիտելիքներ ՀՀ գետերի ու լճերի և դրանց ռեկրեացիոն արժեքի մասին:	2	Դասախոսություն , Հայաստանի գետերի ու լճերի մասին տեսանյութերի ցուցադրություն

	առումով			
51-52.	Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմաճարտարապետական հուշարձաններ ու թանգարաններ	Զարգացնել ճանաչողական և պատմական գիտելիքներ ՀՀ հուշարձանների ու թանգարանների մասին:	2	Սահիկի և տեսանյութի ցուցադրություն
53.	Այց ՀՀ Ազգագրության թանգարան	Ծանոթացնել հայկական մշակույթի նշխարքներին , մասնակցել գորգագործության դասերին	Կես օր	Գրել էսսե տպավորությունների մասին
54-55.	Էկոզբոսաշրջությունը՝ որպես Հայաստանի Հանրապետության միջազգային զբոսաշրջության զարգացման և տնտեսական աճի հիմնախնդիր	Զարգացնել գիտելիքներ Էկոզբոսաշրջության կազմակերպման և ՀՀ-ում դրա զարգացմանը նպաստող գործոնների մասին:	2	Դասախոսություն սահիկի ցուցադրությամբ
56-57.	Զբոսաշրջության արդի վիճակը և զարգացման միտումները	Զարգացնել ակադեմիական գիտելիքներ և ստեղծագործական հմտություններ	2	Կազմակերպել և բեմականացման ձևով վարել հարցազրույց ՀՀ էկոնոմիկայի նախարարի հետ
58-59.	Գործնական աշխատանք	Զարգացնել ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառելու հմտություններ: Ձևավորել համագործակցելու հմտություններ	2	Խմբային աշխատանքների կազմակերպում՝ պատրաստել պաստառ, SWOT գործիքի կիրառմամբ վերլուծել ՀՀ –ում տուրիզմի զարգացումը
60-61.	Դասընթացի ամփոփիչ կրկնություն	Ամրապնդել ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները	2	Դասընթացի ամրապնդում օնլայն խաղերով՝ kahoot,

				learningapps հարթակներով
62.	Ամփոփիչ թեստ	Ստուգել և վերլուծել ձեռք բերած գիտելիքները:	1	Գրավոր թեստի անցկացում
63.	Արդյունքների վերլուծություն		1	Ապահովել հետադարձ կապ քոուչինգի սկզբունքով:
64-66.	Հաշվետու դաս-միջոցառման նախապատրաստում	Կազմակերպել ամփոփիչ դաս՝ ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները ամրապնդելու համար	3	Բաց դասի սցենարի համաստեղծում խմբակի անդամների կողմից
67.	Դաս- միջոցառում		1	
68.	Էքսկուրսիա դեպի Հայաստանի հարավ	Ձևավորել հայրենաճանաչողական երթուղիներ նախագծելու և օրակարգը մշակելու հմտություններ	Մեկ օր	

Պահանջվող նյութատեխնիկական բազա

Համակարգիչներ ինտերնետ հասանելիությամբ, պրոյեկտոր, սմարթ գրատախտակ, հեռախոսներ, սահիկներ, տեսանյութեր, Ա4 ,Ա3 ֆորմատի թղթեր, գունավոր կպչուն թղթեր, մարկերներ, գունավոր մատիտներ, աշխարհագրական ատլասներ, քարտեզներ:

Օգտագործված գրականության ցանկ, հղումներ

1. <<Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն>>, Շուշան Հարությունյան , Երևան-2004
2. <<Ուսումնական համալիր դաշտային պրակտիկա և դպրոցական էկոզբոսաշրջություն>>, Ն.Ի. Սամվելյան, Ռ.Ռ. Սադոյան, Ա.Ա. Մինասյան, Երևան-2022
3. <<Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպման իրավական կարգավորումները>>, Ա. Մարգարյան,Երևան-2017

https://www.youtube.com/watch?v=nCYx2QsZUlM&t=73s

https://www.youtube.com/watch?v=REowY5TQoXs

https://www.youtube.com/watch?v=3WVCy8_5rVg

https://www.youtube.com/watch?v=k_ifTsJlx50

https://www.youtube.com/watch?v=slkIB99e4z0

https://www.youtube.com/watch?v=B_2cDBh7IOU

https://www.youtube.com/watch?v=494baRxZFHU

https://www.youtube.com/watch?v=2V9g3qQGUp0

https://www.youtube.com/watch?v=YpfijTR9l-c